Հավելված N 1
«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2023-81» ծածկագրով հրավերի

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը | չ/մ | միավորի գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | |
| | | | | | | | | | հասցեն* | ժամկետը |
| 1 | 33691420 | ՊՇՌ մեթոդով Mycoplasma pneumoniae-ի ԴՆԹ-ի հայտնաբերման հավաքածու | | ՊՇՌ հավաքածու Mycoplasma pneumoniae-ի ԴՆԹ-ի (կամ Mycoplasma pneumoniae/Chlamydophila pneumoniae միաժամանակ հայտնաբերման) քիթըմպանից, բրոնխալվեոլյար լավաժից, խորխից հիբրիդիզացիոն-ֆլյուրեսցենտային դետեկցիայի միջոցով (տարբերակ FRT) հայտնաբերման համար «իրական ժամանակի» ռեժիմում: Հավաքածուն ադապտացված է «Rotor-Gene» 3000/6000 ամպլիֆիկատորի համար: Հավաքածուի տեղափոխման ջերմային ռեժիմը 2 - 8°C է, 5 օրից ոչ ավել: Հավաքածուն նախատեսված է նվազագույնը 55 ռեակցիայի համար՝ ներառյալ ստուգիչները: Պիտանելիության ժամկետը առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին: Համապատասխանի որակին ներկայացվող միջազգային ստանդարտներին և ունենա որակի հավաստագիր (արտադրողի կողմից խմբաքանակին ներկայացվող հավաստագիր): Գործարանային պիտակավորումով (համաձայն ISO 18113 շարքի ստանդարտների պահանջի), ունենա խմբաքանակի և ապրանքանիշային ծածկագրեր, արտադրողի կողմից արտադրման ամսաթվի և պիտանելիության ժամկետի հստակ նշումներով: Խմբաքանակը կրի հստակ ծածկագիր, ամբողջությամբ լինի միատեսակ (ժամկետի, արտադրողի և փաթեթավորման առումով) և ունենա արտադրողի կողմից խմբաքանակին ներկայացվող որակի հավաստագիր: Արտադրությունն ունենա ներդրված որակի կառավարման համակարգ՝ որակին ներկայացվող միջազգային ԻՍՕ ստանդարտներին համապատասխան (ISO 13485-2017, 9001-2015, CE և/կամ IVD: | լրակազմ | | | 2.00 | ք.Երևան, Դ.Մալյան, 37 | Պայմանագրի/Համաձայնագրի կնքման պահից 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 2 | 33691166 | ՊՇՌ նմուշի տեղափոխման տրանսպորտային միջավայր լործալույծ (մուկոլիտիկ) նյութով | | Նախատեսված է ուրոգենիտալ տրակտից, ըմպանից, ուղիղ աղուց վերցված լործ պարունակող նմուշների տեղափոխման և պահպանման համար: Պարունակում է լործալույծ, կոնսերվանտ և կայունացուցիչ: Ապահովում է կլինիկական նմուշի պահպանումը սենյակային ջերմաստիճանում մինչև 28 օր: Իրենից ներկայացնում է մանրէազերծ աղա-բուֆերային վարդագույն լուծույթ, որի մեջ ավելացված են լործալույծը, կոնսերվանտը և կայունացուցիչը: Փաթեթավորումը՝ 0,5մլ-ոց 50 կամ 100 հատ փորձանոթ: Պիտանելիության ժամկետը՝ նվազագույնը 12 ամիս: Պիտանելիության ժամկետի առնվազն 70% ի առկայություն մատակարարման պահին:Համապատասխանի որակին ներկայացվող միջազգային ստանդարտներին և / կամ ունենա որակի հավաստագիր (արտադրողի կողմից խմբաքանակին ներկայացվող հավաստագիր): | հատ | | | 100.00 | ք.Երևան, Դ.Մալյան, 37 | Պայմանագրի/Համաձայնագրի կնքման պահից 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 3 | 33121270 | Մուկոլիզին | | Ռեագենտ լործաթաղանթներից վերցված կլինիկական նյութի նախնական մշակման համար՝ միկրոսկոպիկ հետազոտություններ անցկացնելու կամ մոլեկուլային գենետիկական հետազոտությունների նպատակով նուկլեինաթթուների անջատման համար: Կլինիկական նյութ՝ խորխ, սերմնահեղուկ, բրոնխոալվեոլային լավաժ, բրոնխիալ լվացումներ, շնչափողի լվացումներ, սինովիալ հեղուկ, թարախ, պլևրային հեղուկ: Փաթեթավորում՝ 100-ական մլ.: Պահպանման ժամկետը՝ նվազագույնը 12 ամիս: Մատակարարման պահին պահպանման ժամկետի առնվազն 70%-ի առկայություն: Համապատասխանում է որակի միջազգային չափանիշներին և/կամ ունի որակի վկայական (արտադրողի կողմից խմբաքանակին ներկայացվող վկայական): | մլ | | | 200.00 | ք.Երևան, Դ.Մալյան, 37 | Պայմանագրի/Համաձայնագրի կնքման պահից 20 օրացուցային օրվա ընթացքում |

***Ապրանքի մատակարարումը՝ բեռնափոխադրումը և բեռնաթափումը համապատասխան պահեստ իրականացվում է Վաճառողի ուժերով և միջոցներով:**